ԹԵՄԱ 2 ԱՆՏԻԿ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ

§ 31. ՀՌՈՄԵԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

1

Հռոմեացիները խուսափում էին մի քանի հակառակորդի դեմ միաժամանակ պատերազմելուց: Երբ նման վտանգ էր առաջանում, Հռոմը ձգտում էր դիվանագիտության միջոցով կանխել և թույլ չտալ հակառակորդներին իր դեմ համատեղ գործել: Եթե դա չէր հաջողվում, Հռոմը հակառակորդներից մեկի հարևան ցեղերին խոստումներով, կաշառքով կամ սպառնալիքներով պատերազմի էր հրահրում նրա դեմ, այդպիսով իր թշնամիներից մեկին շեղելով այլ պատերազմով: Հռոմեացի դիվանագետները հաճախ պատերազմը հետաձգելու, ժամանակ շահելու համար ձգձգում էին բանակցությունները, դիմում էին խաբեության՝ հակառակորդին շփոթեցնելու, ապակողմնորոշելու մեթոդին:

Պատերազմում հաղթելով թշնամուն՝ Հռոմը պարտվածին պարտադրում էր ծանր, բայց չափավոր պայմաններ, խլված տարածքներից մաս տալով իր դաշնակիցներին՝ նրանց և պարտված պետությանը դարձնելով հավերժ իրար թշնամի:

2

Հաղթահանդեսը սովորաբար տևում էր 3 օր: Առաջին երկու օրերին ցուցադրում էին պարտվածներից խլված ավարը, արժեքավոր իրերը և զենքերը: Վերջին օրը հանդիսավորությամբ անցնում էին զինվորները, սպիտակ ձիեր լծած մարտակառքի վրա կանգնած զորավարը, նրա կառքի առջևից քայլում էին նշանավոր գերիները: Տրիումֆն ավարտվում էր զոհաբերություններով և հասարակական հյուրասիրությամբ:

1

3

Բաղնիքում կային տաք և սառը ջրով լոգասենյակներ, հանգստի դահլիճներ, մարմնամարզարան: Այստեղ կարելի էր լսել հռետորների և քաղաքական գործիչների, ովքեր քննարկում էին մարդկանց հուզող տարատեսակ հարցեր: Այստեղ գործնական հանդիպումներ էին անցկացնում, առևտրական պայմանագրեր կնքում: